

այսինքն Հին-Քրդական կամ Խալտէա-Իրանական բարբառին :

Իրանեան նոր ժողովուրդներու մէջ բաց ի Պարսերը՝ ուսումնասիրողներու ուշադրութիւնը գրաւեցին Աֆղաններ, Պելլուպթիներ, Օսեալներ, վերջիններս մի միայն լեզուի կողմանէ թէև անոնք պատմական յարաբերութեանց մէջ հետազօտիչներու հետաքրքրութիւնը կը շարժեն, իրականութեան ընդհանուր և մասնաւոր հետքերուն մէջ կը պատահին Սկիւթացիներուն, Սարմատացիներուն, և յատկապէս ու ընդհանրապէս հիւսիսային Սև ծովեան ու Կովկասեան ժողովուրդներուն :

Ինչ կը վերաբերի Բուխարացիներուն ու Քիւրդերուն, մինչև այժմ անոնք մնացեր են գիտութեան մէջ խնդիրներ որ լուծման կը կարօտին :

Արդ՝ իմ հետազօտութեանց առաջին պտուղը ներկայացնելով գիտական աշխարհի դատաստանին, ամէնէն առաջ կարևոր կը համարեմ բացատրելու իմ որոնումներու պատճառները, սկսելով միայն Քիւրդական ցեղը ու անոր բնակութեան վայրը ցուցադրելէն :

Քիւրդերը՝ ուր որ երևցան այդ անունին տակ՝ պատմութեան մէջ երբէք չհիմնեցին միակ անկախ պետութիւն, և անոնց պատմական նշանակութիւնը կախումն ունի այն ժողովուրդներու կարևորութենէն՝ որոնց հետ անոնք կապեր ունեցան :

Կը հասկցուի որ հանդէպ այդպիսի բարդ հարցի մը, եթէ Քիւրդերու այժմեայ նշանակութիւնը մինչ այսօր մնաց անորոշ, չնայելով որ վերջին տասնամեակի գիտական գրականութեան մէջ քանի մ'անգամ կրկին ու կրկին խօսուեցաւ այն պահանջի վրայ՝ որ պէտք է հիմ դնել գիտութեան վայել քննական հետազօտութեան՝ այդ ցեղերու դոյութեանն ու զարգացման մասին :

Լուրը շատ մը հետազօտիչներու սկզբնաւորութեանց մասին արձագանք գտաւ գիտական թերթերու աշխատակիցներու մէջ :

Ծանօթանալով նիւթիս ծաւալին, ես որոշեցի սկիզբէն որքան կարելի է ուսումնասիրել Քիւրդերու ներկայ քաղաքական